ԱԳՐՈ Լրատու

ՓԵՏՐՎԱՐ 25 - ՄԱՐՏ 7 2017 Թ. ԹԻՎ 4 (2125)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԿՈՆԳՐԵՍ

Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը մասնակցել է Հայաստանում անցկացվող Ֆերմերական կոնգրեսին, որը կազմակերպել էր Օքսֆամ հայաստանյան գրասենյակը՝ Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի հետ համատեղ: Միջոցառմանը ներկա էին շուրջ հարյուր ֆերմերներ և կոոպերատիվների ներկայացուցիչներ հանրապետության տարբեր մարզերից, ինչպես նաև՝ ոլորտի զարգացման գործում ներգրավված տեղական և միջազգային կազմակերպություններ:

Ողջունելով կոնգրեսի մասնակիցներին՝ նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ միջոցառումը հնարավորություն է ընձեռում՝ ֆերմերների հետ համատեղ, քննարկել հարցեր, որոնք հետագայում կարող են ընդգրկվել 2018 թվականի գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի մեջ:Իր խոսքում նախարարն անդրադարձել է պետության կողմից գյուղոլորտի աջակցությանն ուղղված ծրագրերին: Իգնատի Առաքելյանը նշել է, որ այս տարի կշարունակվեն պարարտանյութերի և գարնանացան սերմացուի սուբսիդավորման ծրագրերը, կպահպանվեն գներն ու ծավալները, ավելի մեծ ուշադրություն կդարձվի հասցեականության ապահովմանը: Միաժամանակ նախարարը նշել է, որ նախկինում դիզվառելիքի սուբսիդավորման համար հատկացվող և պարարտանյութերի ծրագրից մրցույթի արդյունքում տնտեսված գումարները կուղղվեն գյուղտեխնիկայի ձեռքբերման ծրագրի սուբսիդավորմանը: Նախարարը տեղեկացրել է, որ առաջիկայում կմեկնարկի լիզինգային ծրագիր, որը բավականին մատչելի պայմաններ է նախատեսում գյուղացիական տնտեսությունների համար, այն է՝ 20 տոկոս կանխավճար, տարեկան 2-3 % տոկոսադրույք և 3-ից մինչև 10 տարի մարման ժամկետ:

2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Ծովագյուղում արտադրված հնդկաձավարը շուտով կհայտնվի տեղական շուկայում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն աշխատանքային այց է կատարել Գեղարքունիքի մարզ:

Նախարարը մեկնել է Ծովագյուղ համայնք, որտեղ եղել է ENPARD ծրագրի շրջանակում ստեղծված հնդկացորենի վերամշակման գործարանում: 2015 թվականից մարզում, ENPARD-ի շնորհիվ, ստեղծվել են 5 կոոպերատիվներ, որոնք զբաղվում են հնդկացորենի մշակությամբ, և հենց նրանց արտադրած հնդկացորենն էլ վերամշակվում է այս արտադրամասում: Նախարարի խոսքով՝ սա բավական հետաքրքիր ծրագիր է, որը հնարավորություն կտա փոխարինել ներմուծումը տեղական արտադրանքով, ուստի պահանջակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալուց հետո, կառավարությունը ծրագրի շարունակականությունն ապահովելու և ընդլայնելու նպատակով, կքննարկի հնդկացորենի արտադրության համար հատուկ պարարտանյութերի և սերմացուի սուբսիդավորման հարցը: Պատասխանատուները հավաստիացրել են՝ արդեն ապրիլի վերջին կունենան փաթեթավորված վերջնական արտադրանք, և հայաստանյան սպառողը հնարավորություն կունենա մանրածախ շուկայից գնել Գեղարքունիքում արտադրված հայկական հնդկաձավարը: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հավելել է, որ կառավարության աջակցության պարագայում, հնդկացորենի արտադրությունը մարզում զարգացման մեծ հեռանկարներ կարող է ունենալ, և ցանքատարածությունները կհասնեն մինչև 1000 հեկտարի:

Այնուհետև նախարարն ուղևորվել է մարզկենտրոն Գավառ, որտեղ խորհրդակցություն է անցկացրել մարզի պատասխանատուների մասնակցությամբ:

Խորհրդակցությանը մասնակցում էր նաև ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Օրակարգում մարզից ներկայացված ներդրումային ծրագրերն էին, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրին, ինչպես նաև պետության կողմից սուբսիդավորված սերմացուների և պարարտանյութերի պարտքերի վերադարձին առնչվող և այլ հարցեր:

2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ տեղի ունեցած հերթական խորհրդակցության ժամանակ քննարկվել է ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքը:

Պետական կառավարման մարմինների ղեկավարները վարչապետին զեկուցել են իրենց ոլորտներում իրականացված միջոցառումների, ինչպես նաև ծրագրով նախատեսված որոշ կետերի չկատարման կամ թերի կատարման պատճառների, այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերի և վերջնական կատարման ժամկետի վերաբերյալ: Կառավարության ղեկավարն անդրադարձել է պետական կառավարման մարմիններին տրված հանձնարարականների կատարման ժամկետներին և կատարողականների որակին՝ հանձնարարելով պահպանել աշխատանքային կարգապահությունը:

Խորհրդակցության ժամանակ անդրադարձ է եղել նաև գերատեսչությունների ներկայացված ներդրումային ծրագրերի ընթացքին: Վարչապետը հետաքրքրվել է այս ուղղությամբ արվող քայլերից՝ ծրագրերի մեկնարկի ժամկետից, գործընկերների հետ համագործակցությունից, ֆինանսական աղբյուրների հստակեցումից և այլն: Կարեն Կարապետյանը հանձնարարել է շարունակել հետևողական աշխատանքը և ամենօրյա վերահսկողության տակ պահել այս հարցը:

Այնուհետև ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարները զեկուցել են ՀՀ կառավարության ծրագրով սահմանված գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ընթացքի մասին: Ներկայացվել են առաջնահերթ ծրագրերը, բարեփոխումներն ու ակնկալվող արդյունքները: Գյուղատնտեսության ոլորտում գերակա ծրագրերը հետևյալն են՝ գյուղատնտեսության մեխանիզացիա և լիզինգ, վակցինացիա, պարարտանյութի, դիզվառելիքի և վարկային տոկոսների սուբսիդավորում, աջակցություն համայնքների զարգացմանը, հակակարկտային կայանների ցանցի ընդլայնում, ոռոգման կաթիլային համակարգի ներդրում, մթերման գործընթացի արդյունավետ կազմակերպում:

«Յուրաքանչյուր գերատեսչության գերակա խնդիրները և ծրագրերը պետք է լինեն կոնկրետ 2017 թ. համար՝ հստակ նախատեսված ժամկետով, պատասխանատուով և արդյունքով», - ասել է կառավարության ղեկավարը՝ հավելելով, որ նման ձևաչափով խորհրդակցությունների ժամանակ քննարկվելու են մի քանի գերատեսչությունների գերակա խնդիրներն ու ծրագրերը, որպեսզի կառավարության բոլոր անդամները տեղյակ լինեն միմյանց անելիքներից:

* * *

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը ներկա է գտնվել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունան սպասարկման նոր կենտրոնի բացմանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարը ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանի և ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի ուղեկցությամբ, շրջել է կենտրոնում, ծանոթացել կենտրոնի աշխատանքներին, զրուցել արտահանում և ներմուծում իրականացնող տնտեսավարողների հետ:

Կոոպերացիա Էջ 3

Ներկայացված է քննարկման Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ԿՈՆԳՐԵՍ

Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր

1

«Այսպիսով, տնտեսված գումարներն ուղղվելու են մատչելի տոկոսով ֆինանսական գործիքի ստեղծմանը և ֆերմերների համար մատչելի գներով գյուղտեխնիկայի ձեռքբերման համար պայմանների ապահովմանը: Իմ կարծիքով, պետք է ստեղծել բազային հնարավորություն, որ ցանկացած տնտեսություն կարողանա մատչելի գնով գնել գյուղտեխնիկա», - հավելել է նախարարը:

Իր ելույթում Իգնատի Առաքելյանը կարևորել է ոռոգման կաթիլային համակարգի և հակակարկտային ցանցերի ներդրումը՝ միաժամանակ նշելով, որ մասնագիտացված ընկերությունների հետ հաշվարկներ են իրականացվում այս համակարգերի ներդրման հարցում երկարաժամկետ և էժան վարկային ռեսուրսների ներգրավման հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով: Նախարարն ընդգծել է նաև ագրարային ոլորտում բարձրակարգ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը, սննդամթերքի որակի և անվտանգության ուղղությամբ լայնամաշտաբ աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ պարտադիր սպանդանոցային մորթի անցման հարցը, որի վերաբերյալ որոշումն այս պահին շրջանառության մեջ է, ինչպես նաև բուսաբուծության ոլորտում սերմնաբուծարանների, իսկ անասնաբուծության ոլորտում՝ տոհմաբուծարանների կայացումը: «Այս միջոցառման նպատակն է՝ ստեղծել երկխոսության հարթակ՝ ֆերմերային տնտեսությունների և ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով ձեզ առաջարկություններ ներկայացնել նախարարին, ինչպես նաև կիսվել միմյանց հետ հաջողված փորձով», - բացման խոսքում նշել է Օքսֆամ հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը: Նա նաև հույս է հայտնել, որ նման ձևաչափով միջոցառումները կկրեն շարունակական բնույթ:

Այնուհետև նախարարը պատասխանել է միջոցառման մասնակիցների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին գյուղատնտեսության վարկավորմանը, գյուղմթերքի և սերմերի ներկրումներին, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը, օրգանական գյուղատնտեսությանը, կաթի գնագոյացմանը, ինչպես նաև՝ կոոպերացիայի զարգացմանը:

Միջոցառումը կազմակերպվել է Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Հարավային Կովկասում պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարությունների և մանր ֆերմերական արտադրության միջոցով» քառամյա ծրագրի շրջանակում:

Ֆերմերական կոնգրեսի նպատակն է՝ նպաստել գյուղատնտեսության և մանր ֆերմերային տնտեսությունների վերաբերյալ ռազմավարական քննարկումների ծավալմանը, ինչպես նաև գտնել հնարավոր լուծումներ՝ գործընթացի իրականացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Ծովագյուղում արտադրված հնդկաձավարը շուտով կհայտնվի տեղական շուկայում

1

Գեղարքունիքի մարզից կառավարության քննարկմանը ներկայացված ծրագրերից 7-ը հավանության է արժանացել, որից 3-ի պարագայում նաև հստակեցվել են ֆինանսավորման աղբյուրները, ընդ որում, Ակունքի պանրի գործարանի գործարկման առաջարկությունը համարվել է տարածաշրջանի զարգացման համար լոկոմոտիվային: Այն կյանքի կոչելու դեպքում մարզում կստեղծվի 25-30 աշխատատեղ, կլուծվի ամռան ամիսներին կաթի մթերման խնդիրը:

Մարզից ներկայացված մյուս ծրագրերը վերաբերում են կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության հզորությունների ընդլայնմանը, շինշիլաբուծական տոհմային տնտեսության, ոչխարաբուծության զարգացմանը, կտավատի ձեթի արտադրությանը, հնդկացորենի արտադրության և հնդկաձավարի իրացման համակողմանի ավելացմանը: Նախարարը շահառուների հետ քննարկել է ծրագրերի իրատեսականությունը, ֆինանսավորման աղբյուրների ներգրավման հնարավորությունները և այլ հարցեր:

Անդրադառնալով պետական օժանդակության ծրագրերին՝ Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ այս տարի նույնպես կշարունակվեն պարարտանյութերի և գարնանացան սերմացուի սուբսիդավորման ծրագրերը, կպահպանվեն գներն և կբավարարվի մարզի կողմից ներկայացված ամբողջ պահանջարկը, դիզելային վառելանյութի սուբսիդավորումն այս պահին համարվել է աննպատակահարմար: Միաժամանակ նախարարն ուշադրություն է հրավիրել նախկին տարիներին կուտակված պարտքերի վերադարձի խնդրին՝ ընդգծելով, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է ակտիվացնել:

ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը զեկուցել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի առաջին և երկրորդ փուլերում իրականացված աշխատանքների արդյունքների մասին:

Ըստ այդմ՝ Գեղարքունիքի մարզի 42 համայնքում ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ, կառուցվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգեր (86,75 կմ ջրագիծ, 69 խմոց), տրամադրվել է 473 միավոր գյուղտեխնիկա, ինչպես նաև տարբեր համայնքներում իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր: 2017 թվականի ընթացքում նախատեսվում է մարզի 6 համայնքում ավարտել արոտավայրերի ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքները (ընդամենը՝ շուրջ 39 կմ ջրագիծ, 12 խմոց), տրամադրել շուրջ 74 մլն դրամի գյուղտեխնիկա և 8 000-50 000 ԱՄՆ դոլարի չափով նպատակային ֆինանսական օժանդակություն՝ կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշղթայի այլ մասնակիցներին:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն այս տարի աննախադեպ արդյունքներ է գրանցել

Հայաստանն այս տարի աննախադեպ արդյունքներ է գրանցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Նոյշտադտ քաղաքում փետրվարի 25-ին տեղի ունեցած «MUNDUS VINI 20th Grand International Wine Awards» միջազգային մրցանակաբաշխությանը: Մրցույթին մասնակցած հայկական գինեգործական ընկերությունների ներկայացրած արտադրանքն արժանացել է 23 մեդալի՝ 10 ոսկի և 13 արծաթ: Հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունն ապահովել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը՝ «Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի» (CBI) աջակցությամբ:

Հայաստանից մրցույթին մասնակցել են 19 գինեգործական ընկերություններ՝ գնահատող հանձնաժողովի դատին ներկայացնելով 58 տեսակի հանգիստ և փրփրուն գինիներ:

Ընդհանուր առմամբ, մրցույթին ներկայացված էին շուրջ 6 000 տեսակի գինիներ՝ աշխարհի 44 երկրներից: Հայաստանն իր նվաճած մեդալների քանակով առաջ է անցել այնպիսի երկրներից, ինչպիսիք են Վրաստանը (4 ոսկի, 7 արծաթ), Մոլդովան (8 ոսկի, 12 արծաթ), Մակեդոնիան (6 ոսկի, 3 արծաթ), Ռումինիան (6 ոսկի, 5 արծաթ), Չինաստանը (1 ոսկի, 1 արծաթ): Արդյունքում՝ մեր երկիրը մեդալների քանակով կիսել է 14-րդ հորիզոնականը Նոր Զելանդիայի և Հունգարիայի հետ:

Մրցույթին մասնակցած գինիները գնահատվել են շուրջ 200 հեղինակավոր մասնագետներից կազմված ժյուրիի կողմից, որի կազմում առաջին անգամ ընդգրկվել է նաև ներկայացուցիչ Հայաստանից՝ Տրինիտի ՍՊԸ-ի գինեգործ Արտեմ Պարսեղյանը:

Հայկական գինիները համտեսելու նպատակով, «MUNDUS VINI 20th Grand International Wine Awards» մրցանակաբաշխության շրջանակներում, կազմակերպվել է գալա ընթրիք: Հայկական գինիների համտեսի ներքո «Գոլդեն Գրեյպ Արմաս» գործարանի գլխավոր տնօրեն Վիկտորիա Ասլանյանը ներկայացրել է Հայկական գինիների շնորհանդես, որն արժանացել է «Լավագույն շնորհանդես» մրցանակի:

Միջոցառման նպատակն էր՝ նպաստել ինչպես ԵՄ, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների շուկաներում հայկական գինեգործական ոլորտի ճանաչելիության բարձրացմանը, արտահանման ծավալների աճի խթանմանը և նոր գործընկերների բացահայտմանը:

Մեդալների արժանացած գինիների ցանկ

Ոսկե մեդալ

1. «Վան Արդի», 2015 Van Ardi Areni, Kakhet, Haghtanak
2. 2015 Areni Reserve
3. 2015 Van Ardi Reserve Syrah
4. «Գոլդեն Գրեյպ Արմաս», 2013 ArmAs Karmrahyut Reserve
5. «Ոսկեվազի Գինու Գործարան», 2015 Voskevaz Karasi collection Voskehat
6. «Արմենիա Վայն», 2014 Takar Reserve
7. «Տիեռաս Դե Արմենիա», 2013 Karas Reserve Winemaker's Selection Blend
8. «Օլդ Բրիջ», 2009 Old Bridge Red Dry Reserve
9. «Գետնատուն», 2015 Getnatoun Areni Noir Aghavnadzor Village
10. «Տրինիտի», 2014 Trinity Eh Areni Noir

Արծաթե մեդալ

1. «Գոլդեն Գրեյպ Արմաս», 2013 ArmAs Voskehat Reserve
2. «Արմենիա Վայն», 2016 Armenia Muscat
   2014 Tariri
   2014 Takar Areni
3. «Ոսկեվազի Գինու Գործարան»,2015 Voskevaz Hightanak
   2014 Voskevaz Voskepar Voskehat
4. «Տիեռաս Դե Արմենիա», 2015 Karas White Dry Wine
   2015 Karas Red Wine
5. «Գետնատուն», 2015 Getnatoun Voskehat
6. «Հայլենդ Սելլարս», 2015 Koor Dry Red Wine
   2014 Koor Reserve
7. «Արտաշատ Վինկոն», 2014 Chateau Rind
8. «Անուշ 1», 2014 Kataro Sireni Reserve Togh:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայրի բնության համաշխարհային օրը

Աշխարհում մարտի 3-ը նշվում է որպես Վայրի բնության համաշխարհային օր: ՄԱԿ-ը այս օրը հռչակել է Վայրի բնության համաշխարհային օր 2013 թվականի դեկտեմբերի 20-ին:

ՄԱԿ-ի հաղորդագրության համաձայն՝ 2017թ-ին Վայրի բնության համաշխարհային օրն անցկացվում է «Լսիր երիտասարդների ձայնը» կարգախոսով՝ հաշվի առնելով, որ աշխարհի բնակչության մեկ քառորդը 10-24 տարեկան են: Հարկավոր է խրախուսել երիտասարդներին՝ որպես ապագա առաջնորդների և աշխարհում որոշումներ կայացնող անձանց, որպեսզի գործեն ինչպես գլոբալ, այնպես էլ տեղական մակարդակով՝ պաշտպանելու ոչնչացման վտանգի տակ հայտնված վայրի բնությունը:

Երևանում այս օրը նշվում է «Հայոց լեռների արքա կովկասյան ընձառյուծ» խորագրով ցուցահանդեսով: Այն կազմակերպել է WWF-Հայաստանը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աջակցությամբ: Ցուցահանդեսի նպատակն է՝ բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը կովկասյան ընձառյուծի վերաբերյալ:

Ցուցահանդեսում ցուցադրված լուսանկարները ներկայացնում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը, որս հանդիսացող կենդանատեսակները, ինչպես նաև պահպանությանն ուղղված միջոցառումները: Ցուցահանդեսն անցկացվում է մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանում:

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 25 - մարտ 7, 2017 թ.
թիվ 4 (2125)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Լուսինե Բեջանյանը «Դեբեդ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվի նախագահն է (գործում է ՀՀ Տավուշի մարզի Լճկաձոր համայնքում), զբաղվում են ջերմատնային բանջարեղենի արտադրությամբ: Կոոպերատիվը ձևավորվել է 2 տարի առաջ՝ OXFAM–ի աջակցությամբ:

Կոոպերատիվն ունի 12 անդամ, բոլորը կանայք են: Լուսինեն մասնագիտությամբ մանկավարժ է, աշխատում է նաև Լճկաձորի հիմնական դպրոցում: Ջերմատներում մշակում են հիմնականում լոլիկ, փոքր քանակությամբ վարունգ և լոբի: Ավելի քան 550 մ^2 տարածք զբաղեցնող պոլիէթիլենային թաղանթապատ ջերմոցներում ներդրել են ոռոգման կաթիլային համակարգ: Տնտեսությունն աստիճանաբար անցնում է օրգանիկ գյուղատնտեսության: Տիկին Բեջանյանի տեղեկացմամբ, կոոպերատիվի ամենամեծ հիմնախնդիրը ոռոգման ջրի սակավությունն է: Ի դեպ, գյուղն ունի նաև խմելու ջրի խնդիր: Մյուս հիմնախնդիրն էլ, ըստ տիկին Բեջանյանի, ջերմատներում ջեռուցման բացակայությունն է: Դրա հետևանքով ցանքերը կազմակերպում են մարտ-ապրիլ ամիսներին, իսկ բերքը ստացվում է ամռանը. այդ ժամանակ ջերմոցային եղանակով ստացված բերքի գինը զգալիորեն իջնում է: Կոոպերատիվի նախագահի կարծիքով՝ նշված խնդիրների լուծման դեպքում, կընդարձակեն ջերմատների տարածքները, կընդլայնեն արտադրությունն ու կավելացնեն տեսականին, բացի այդ, կաշխատեն նաև ձմռան ամիսներին:

Արտադրանքի իրացման հետ կապված խնդիր չկա, այն ամբողջությամբ իրացվում է տարածաշրջանում: «Կոոպերատիվում ընդգրկված են տարբեր մասնագիտություններ ունեցող անձիք, ինչպես նաև տնային տնտեսուհիներ: Աշխատելով կոոպերատիվում՝ կանայք կարողանում են ստանալ փոքր եկամուտներ, ինչի շնորհիվ ինչ-որ չափով հոգում են ընտանիքի նյութական կարիքները»,- պատմում է կոոպերատիվի նախագահը: Նրա կարծիքով՝ առանց որևէ աջակցության, իրենք չէին կարող ստեղծել այդպիսի կայացած և հաջողակ տնտեսություն: Օքսֆամն աջակցել է ջերմոցների կառուցմանը, սերմերի և թաղարային եղանակով աճեցված սածիլների տրամադրմանը, ինչպես նաև պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերմանը: Սածիլներն ու սերմերը ձեռք են բերում ՀՀ գյուղատնտեսության նախարարության Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնից:

Կոոպերատիվի անդամները որոշել են այս տարվանից հողը պարարտացնել բացառապես օրգանական պարարտանյութով, մասնավորապես՝ գոմաղբով: «Նպատակը օրգանական գյուղատնտեսության զարգացումն է, ելնելով սպառողի շահերի պաշտպանության տեսանկյունից՝ բնապահպանորեն մաքուր սննդամթերքի արտադրության կազմակերպումը»,- ասում է կոոպերատիվի նախագահը:

«Դեբեդ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվի անդամներով համատեղ են լուծում ծագած բոլոր խնդիրները, կազմակերպում են բերքի իրացումը, միասին որոշումներ կայացնում: «Համատեղ աշխատանքը հնարավորություն է տալիս բարձրացնել տնտեսության արդյունավետությունը, ավելացնել եկամուտները»,- անդրադառնալով կոոպերատիվի առավելություններին՝ եզրահանգում է տիկին Բեջանյանը:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

LOGOS EXPO–Ն ՆՊԱՍՏԵՑ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ

Ինչպես միշտ, այս տարի ևս, LOGOS EXPO Center ցուցահանդեսային ընկերության օրերս Երևանում կազմակերպած «Առողջապահություն և դեղագործություն Expo - 2017» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսն անմասն չէր գյուղատնտեսական, բնապահպանորեն մաքուր, արտադրատեսակների ցուցադրումից: Ցուցահանդես էին բերվել մեղր և մեղվամթերքներ, բուժիչ և կանխարգելիչ բուսական թեյեր, խոտաբույսեր, հանքանյութերի հումքի հիման վրա պատրաստված գյուղատնտեսական կենդանիների կերերի բնական հավելանյութեր, ինչպես նաև՝ «Ալոյե հարյուրամյա» ընկերության արտադրանքը:

Ցուցահանդեսը բացառիկ հնարավորություն ընձեռեց լսել առաջատար մասնագետների կարծիքը և խորհուրդները, գտնել այսօրվա պրակտիկայով թելադրված խնդիրները լուծելու ուղիներ: «Մեղվաբույծների ազգային միավորում» ՀԿ-ն ցուցադրման էր բերել մեղվամթերքներից ստացված դեղամիջոցներ, ինչպես նաև՝ մեղվակաթով, ծաղկափոշով, ակնամոմով, սերեկով մեղր, ծաղկափոշով խյուս և այլն (23 անուն արտադրանք): Միության նախագահ Թելման Նազարյանն անդրադառնալով մեղվամթերքների բուժական հատկանիշներին՝ նշեց, որ չկան անբուժելի հիվանդություններ, քանի որ մեղվամթերքները մեծ կիրառություն ունեն ապիթերապիայի բնագավառում և ցուցաբերում են բարձր արդյունք: Այսպես, օրինակ՝ մեղվամթերքներից ստացված դեղամիջոցներով հնարավոր է բուժել մի շարք ոչ վարակիչ հիվանդություններ: «Մեղվաբույծների ազգային միավորում»-ն ունի 7500 անդամ՝ ՀՀ-ի մարզերում և ԼՂՀ-ում՝ 74 մասնաճյուղեր:

Թելման Նազարյանը ստացիոնար մեղվաբուծությամբ զբաղվում է ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք համայնքում: Միության նախագահի կարծիքով, հանրապետությունում մեղվաբուծության ճյուղի զարգացումը կարող է նպաստել արտագաղթի կանխարգելմանը, քանի որ այդպիսով կլուծվի մարդկանց աշխատանքով զբաղվածության խնդիրը: Թերևս ճյուղի զարգացումը, ըստ Թելման Նազարյանի, հնարավոր չէ առանց պետական աջակցության: Օրինակ՝ հարկավոր է լրավճարներ հատկացնել մեղվաբույծներին, լուծել մեղրի և մեղվամթերքի արտահանման խնդիրը և այլն:

Ուշագրավ էր «Ս. Սերգոյան» ԱՁ-ի տաղավարը, որտեղ ներկայացված էին գյուղատնտեսական կենդանիների բնական հավելակերեր: Տնօրեն Սամվել Սերգոյանի տեղեկացմամբ, դրանք 2-3 % խառնելով կերին՝ հարստացնում են այն, բարձրացնելով սննդային արժեքը: Ընկերությունն արտադրում է «Kremnevit» կոչվող կերային հավելումը, որը նախատեսված է խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի համար: Կերային հավելանյութերը պարունակում են լիզին և հանքային այլ նյութեր, ինչպես նաև տվյալ կենդանատեսակի կողմից պահանջվող վիտամիններ: Սամվել Սերգոյանի տեղեկացմամբ, այս հավելանյութը նպաստում է կենդանիների քաշաճի ավելացմանն ու նյութափոխանակության բարելավմանը: Ցուցադրված էր նաև ունիվերսալ «Bentovit» կերային բնական հավելանյութը, որը նպաստավոր է ոչ միայն գյուղատնտեսական, այլև ընտանի կենդանիների՝ շների և կատուների համար:

Ընտանի և վայրի թռչունների համար (հավեր, աղավնիներ և այլն) ընկերությունն արտադրում է դարձյալ վիտամիններով հագեցած հատիկավորված կեր: Այլ կերպ ասած՝ կերային այս հավելանյութերն իրենց մեջ պարունակում են մակրո և միկրոէլեմենտների այն կազմը, որն անհրաժեշտ է կենդանուն: «Միաժամանակ, դրանք նպաստում են կենդանիների իմունային համակարգի բարելավմանը, վերջիններս զերծ են մնում սննդային թունավորումներից», - նշում է Սամվել Սերգոյանը: Անհատ ձեռներեցն արտադրում է նաև «Հայկավ» ապրանքանիշը կրող բուժական և կոսմետիկ կավեր, որոնք նույնպես ներկայացված էին ցուցադրման:

«Ալոյե հարյուրամյա» ընկերությունը, որը գործում է ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում, ցուցադրման էր ներկայացրել ջերմատնային ալոյե բուսատեսակից պատրաստված արտադրատեսակներ: «Այս բուսատեսակի մոտ, սկսած 3 տարեկանից, աստիճանաբար ավելանում են բուժական հատկությունները: Մեր բույսերն արդեն 5-6 տարեկան են»,- նշում է ընկերության ներկայացուցիչ Լուսինե Ավագյանը: Համագործակցելով «Ֆիդորա» ՍՊԸ-ի հետ՝ սկսել են արտադրել նաև այս բուսատեսակի յուղը: «Ինչ վերաբերում է ալոյեի բուժական նշանակությանը, ապա այն ունի կանխարգելիչ ազդեցություն, մաքրում է օրգանիզմը, նպաստում է աղեստամոքսային համակարգի գործունեության բարելավմանը, բուժում է ստամոքսաբորբը և այլ հիվանդություններ»,- հավելում է Լուսինեն: Ցուցադրման էր ներկայացված նաև ալոյեի հյութը և կանաչ տերևները: Կազմակերպվել էր նաև տեսականու համտես: Ընկերությունն իրականացնում է նաև ալոյե բուսատեսակի տնկիների վաճառք:

Հարուստ ու բազմազան էր «Անթառամ» կոոպերատիվի տաղավարը, որտեղ ներկայացված էին ավելի քան 20 անուն բուսական թեյեր և բուժիչ խոտաբույսերի բազմաթիվ տեսակներ: Կոոպերատիվն իրականացնում է բուժիչ մի շարք բուսատեսակների ցանք, որոնք մեծ պահանջարկ են վայելում: Ցանում են հիմնականում վաղինակ, երիցուկ, պատրինջ, կտավատ, սամիթ և այլ բուսատեսակներ: Ցանքատարածքները գտնվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի տարածքում: Նախորդ տարի առաջին անգամ Արարատյան դաշտավայրում ցանել են մեղրախոտ բուսատեսակը, որը բերքատվության բարձր արդյունք է ապահովել: Կոոպերատիվի հիմնադիր տնօրեն Անտոն Գալստյանի տեղեկացմամբ, մինչև տարեվերջ ձեռք կբերեն օրգանիկ արտադրության սերտիֆիկատ, ինչը նաև բարձրորակ արտադրանքի արտահանման լայն հնարավորություն կընձեռի:

Ընկերությունը թողարկում է շուրջ 120 անուն բուժիչ խոտաբույսեր և բուսական թեյեր, որոնց ցանկը գնալով ավելանում է: «Անթառամ»-ը մարզերում կազմակերպում է նաև վայրի բուսատեսակների հավաքում և ավանդական եղանակով չորացում, ինչի շնորհիվ լուծվում է նաև կանանց աշխատանքով զբաղվածության խնդիրը: «Հայաստանի բուսաշխարհը հարուստ է բազմաթիվ բուսատեսակներով, սակայն պետք է խելամիտ և չափավորված կազմակերպել դրանց հավաքման աշխատանքները, որպեսզի հազվագյուտ շատ բուսատեսակներ չհայտնվեն անհետացման վտանգի առաջ», - ասում է մասնագիտությամբ դեղագետ Անտոն Գալստյանը, ապա հավելում, որ աշխատանքն է բարիքների աղբյուրը, իսկ իր աշխատանքը ոչ միայն ցանկալի, այլև հաճելի զբաղմունք է:

Ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպվեցին նաև սեմինարներ, կլոր սեղաններ և շնորհանդեսներ: Ցուցահանդեսը նպաստեց նոր գործընկերների ձեռքբերմանը, մասնակիցների միջև կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, հողերի որակական հատկությունները շարունակաբար վատթարանում են դեգրադացիայի՝ էրոզիայի, հումուսի պարունակության (օրգանական ածխածնի) ընդհանուր պաշարների նվազման, հողերի փոշիացման և այլ վտանգների պատճառով. այս առումով գործուն միջամտություն է անհրաժեշտ՝ իրավիճակը բարելավելու համար:

Սույն խնդրին անդրադառնալով՝ 2017թ.ի փետրվարի 23-ին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) «Աջակցություն Հայաստանում մշակաբույսերի կառավարման ժամանակակից փորձի խթանմանն ու ընդունմանը» և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման (ԵՀԳԳԶԾ/ENPARD) ծրագրի շրջանակներում», կազմակերպվեց աշխատաժողով, որի նպատակն էր՝ աջակցել Հայաստանում հողերի բերրիության պահպանմանը, դեգրադացիայի նվազեցմանն ու կանխարգելմանն ուղղված գործողություններին: ԵՀԳԳԶԾ/ENPARD ծրագրի շրջանակում, ոլորտի փորձագետները կատարել են ուսումնասիրություններ՝ Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցությունը հողերի դեգրադացիայի և բերրիության վրա պարզելու նպատակով: Ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև՝ հանրապետությունում հողերի կայուն կառավարման, բերրիության բարձրացման և մշակաբույսերի բերքատվության ավելացման ուղղությամբ արված գործնական առաջարկությունների փաթեթը ներկայացվեց աշխատաժողովի ընթացքում:

«Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում երկրագործության համակարգերի կայունությունն ու հարմարվողականությունը, որոշակիորեն նվազեցնելու կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության վրա»,- նշում է ծրագրի գյուղատնտեսության փորձագետ Գառնիկ Պետրոսյանը:

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Աշոտ Հարությունյանը, ՊԳԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի գյուղատնտեսության գծով պատասխանատու Ավետիք Ներսիսյանը, ներկայացուցիչներ նախարարություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից, ԳԱՄԿ-երից և այլ շահագրգիռ կողմերից: Աշխատաժողովի ընթացքում մասնակիցների և դոնոր կազմակերպությունների քննարկմանը ներկայացվեց ՊԳԿ-ի կողմից մշակված «Աջակցություն՝ Հայաստանում հողերի կայուն կառավարման փորձի ներդրման և զարգացման գործում» ծրագրի նախագիծը, որում հաշվի է առնվել ռեսուրսախնայողական գյուղատնտեսության ներդրման ուղղությամբ՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից Հայաստանում և տարածաշրջանում իրականացվող ծրագրերի փորձը: Ծրագրի իրականացումը նպատակ ունի զարգացնելու ռեսուրսախնայողական գյուղատնտեսությունն ամբողջ հանրապետությունում և նպաստելու հողերի պահպանման և արդյունավետ կառավարման գործընթացին:

Լուսինե Ղուկասյան
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի գլխավորությամբ հրավիրված խորհրդակցությանը «ԱՐԱՐԱՏ» սննդի կոմբինատի («Սարգիս-Կարոլինա» ընկերություն) տնօրեն Երվանդ Թարվերդյանը համայնքապետերին և գյուղացիական տնտեսությունների պատասխանատուներին ներկայացրեց Արմավիրի պահածոների նախկին գործարանի վերագործարկման ծրագրի արդյունքում նախատեսվող պտղի և բանջար-բոստանային մշակաբույսերի մթերման ծավալը և նախնական արժեքը: Տեղեկացվեց նաև, որ մթերման գործընթացը, ցանկության դեպքում, հնարավոր է կազմակերպել նաև պայմանագրային հիմունքներով:

«Սարգիս-Կարոլինա» ընկերությունը, որը վարձակալությամբ ձեռք է բերել Արմավիրի պահածոների նախկին գործարանի մի մասը, առաջիկայում նախատեսում է գործարանում իրականացնել վերակառուցման լայնամասշտաբ աշխատանքներ և կազմակերպել մեծածավալ մթերումներ: Գործարանում նախատեսվում է նաև կազմակերպել մանկական կերերի արտադրություն: Ծրագրի ներդրումային ծավալն, ընդհանուր առմամբ, կկազմի 7-8 մլն ԱՄՆ դոլար: Գործարանի վերագործարկման արդյունքում, ըստ Երվանդ Թարվերդյանի, ակնկալվում է 100-120 նոր աշխատատեղ, որի թիվը հաջորդող տարիներին կհասնի 300-400-ի: Գործարանում հիմնականում կարտադրվեն մրգային և բանջարեղենային խյուսեր և պահածոների լայն տեսականի, որոնց գերակշիռ մասը կարտահանվի:

Հանդիպման մասնակիցները ողջունեցին ընկերության պատասխանատուի համագործակցության առաջարկը և միասին աշխատելու պատրաստակամություն հայտնեցին:

Նկատի ունենալով «Սարգիս-Կարոլինա» ընկերության տարիների անբասիր աշխատանքը՝ մարզպետ Աշոտ Ղահրամանյանը ուրախությամբ փաստեց, որ Արմավիրի պահածոների նախկին գործարանի վերագործարկման ծրագրի արդյունքում՝ մարզի ֆերմերները ձեռք կբերեն հուսալի գործընկեր գյուղմթերքի իրացման շուկայում, կձերբազատվեն մթերման շրջանում առաջացող հոգսերից, իսկ մեծ թվով մարդիկ էլ կապահովվեն աշխատանքով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՍԵԶՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Վերջերս Շիրակի մարզպետարանում, համայնքներին ղեկավարների մասնակցությամբ, անցկացվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը, ԱԺ գյուղատնտեսության և բնապահպանության հանձնաժողովի նախագահ Մարտուն Գրիգորյանը, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին առաջիկա ոռոգման տարվա հետ կապված տարատեսակ խնդիրներ: «Ողջունելի է, որ ոռոգման սեզոնի մեկնարկը դեռ չտրված՝ պատասխանատուները մտահոգ են խնդիրների լուծմամբ»,- նշել է Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը: Այնուհետև Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանը անդրադառնալով ոռոգման խնդիրներին՝ տեղեկացրեց, որ մարզում ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են ժամանակին, իսկ 2016 թվականին ջրօգտագործողների հետ կնքվել են 10709 պայմանագիր՝ 7052.6 հա ոռոգելու համար: Պլանավորվել է 26000 հազ. մ^3 ջրառ և 13170 հազ. մ^3 ջրտուք, 2016 թ. ոռոգման ջրի վարձավճարների գանձումը հասցվել է մինչև 91 %՝ 28.12.2016թ. դրությամբ: «Շիրակի» ՋՕԸ-ի կողմից 2016 թվականին իրականացվել են ինչպես ոռոգման ցանցի նորոգման, այնպես էլ մաքրման աշխատանքներ:

ԱԺ գյուղատնտեսության և բնապահպանության հանձնաժողովի նախագահ Մարտուն Գրիգորյանն իր խոսքում կարևորել է գյուղացիական տնտեսություններին հուզող հիմնահարցերի ժամանակին լուծումը՝ նշելով, որ օր առաջ գյուղացուն օգնելն ամենակարևոր խնդիրն է:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանը նախ լսեց համայնքների տարբեր հարցերով դիմող ղեկավարներին, ապա ընդգծեց, որ իրենք ևս մտահոգ են մարզում ոռոգման և խմելու ջրի ցանցերի նորոգման խնդիրներով, մի շարք ծրագրեր արդեն իսկ մեկնարկել են, մասնավորապես՝ Կապսի ջրամբարի շինարարության նախագծային աշխատանքները, ինչպես նաև առաջին իսկ հնարավորության դեպքում կաշխատեն խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՖԵՐՄԵՐԻՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Վերջերս ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագետների հանդիպումը Վայոց ձորի մարզի ֆերմերների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 90 ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ:

Վայոց ձորի մարզում գյուղոլորտի զարգացման ուղղությունների և խնդիրների մասին զեկուցումներով հանդես եկան Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս, ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հայկ Ղազարյանը, ծննդագիտության և վիրաբուժության ամբիոնի դասախոս, դոցենտ Վրեժ Խոցանյանը, այգեպտղաբուծության և բ/պ ամբիոնի դոցենտ, գ.գ.թ. Արա Հովհաննիսյանը և Երևանի գինու ակադեմիայի տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Զարուհի Մուրադյանը:

Բանախոսները նշեցին, որ հանդիպման անհրաժեշտությունը ծագել է գյուղոլորտում 25 տարի առաջ տեղի ունեցած բարեփոխումներից սպասված արդյունքների ոչ բավարար լինելուց: Նրանք ներկայացրին մարզում անասնապահության, պտղարտադրության, գինեգործության և բնամթերքների վերամշակման հնարավոր հեռանկարները: Խոսվեց շուկայական հարաբերությունների, արտադրված և վերամշակված արտադրանքների ապրանքային տեսքն ապահովելու և այլ խնդիրների մասին: Կարևորվեց գյուղատնտեսական կոոպերատիվներ հիմնելու և գյուղտեխնիկա ձեռք բերելու հարցը:

Ներկաներն իրենց հուզող հարցերն ուղղեցին հանդիպման բանախոսներին և նշեցին, որ գյուղոլորտում առկա են դժվար հաղթահարելի, երբեմն անհաղթահարելի խոչընդոտներ: Բանախոսների կողմից նշվեց, որ հանդիպումը միտված է հենց այդ խնդիրները վեր հանելուն և ոլորտի բարեփոխման ծրագրեր կազմելուն:

Ամփոփելով հանդիպումը՝ մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը հորդորեց մասնակիցներին մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին ներկայացնել ներդրումային ծրագրեր, որոնք կներկայացվեն ՀՀ կառավարություն, և հավանության արժանանալուց հետո, կարվեն համապատասխան ներդրումներ: Ս. Թարվերդյանը նշեց, որ ֆերմերներին և գյուղացիական տնտեսությունների ղեկավարներին ծրագրեր գրելու գործում, մեթոդական օժանդակություն կցուցաբերվի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից:

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 25 - մարտ 7, 2017 թ.
թիվ 4 (2125)

ԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՔՆՆԱՐԿՄԱՆ

ՖԵՐՄԵՐ ԵՎ ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ...

Հարց, որը պարբերաբար է պահանջում

ՀՀ-ում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ոչ բոլոր տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ կան հստակ տվյալներ: Խոսքը՝ երկրի ՀՆԱ-ի 20%-ն ապահովող շուրջ 340.0 հազար տնտեսությունների մասին է, որոնց կարգավիճակը մինչև այսօր չի հստակեցված:

«Գյուղացիական տնտեսությունների և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» 1991 թ. ՀՀ օրենքի դրույթներում հստակ բնութագրված էր «Գյուղացիական տնտեսություն» հասկացության էությունը և սահմանված էր իրավական կարգավիճակը: Սակայն 2006 թ.-ից սկսած՝ նշված օրենքը ուժը կորցնելուց հետո, պաշտոնական փաստաթղթերում հանդիպում ենք անձի կարգավիճակ ունեցող, անհատական կամ բնակչության տնտեսություններ ձևակերպումների:

Դա հանգեցնում է նրան, որ հաճախ քննարկումների կամ ծրագրերի մշակման ժամանակ առաջ են գալիս տարաբնույթ մեկնաբանություններ և երկակի բնորոշումներ, արդյունքում մի շարք աշխատանքներում և հրատարակություններում դրանք բնութագրվում են որպես ֆերմերային, գյուղացիական, գյուղական կամ գյուղատնտեսական տնտեսություններ: Դրանց հրապարակման և մեկնաբանման հիմքում ընդունվում են «крестянин» և «крестянский» (գյուղացի և գյուղացիական) արտահայտությունները, որոնք ծագումնաբանական և արմատական միևնույն հիմքերն ունենալով հանդերձ, լիարժեք չեն բնութագրում տնտեսության այն կարևոր դերակատարին՝ գյուղատնտեսական մթերք արտադրողին, որն իրականացնում է ագրարային ոլորտի ամենապատասխանատու և հիմական գործառույթը:

Դա բխում է նաև նրանից, որ պատմականորեն բոլոր երկրներում ի սկզբանե գյուղացիական տնտեսության գործունեությունն ուղղված է եղել գյուղատնտեսական մթերքներով ապահովելը, իսկ որպես գյուղաբնակներ՝ անվանվել են գյուղացիներ: Հետագայում նրանց նպատակներն ու խնդիրները, սոցիալական վիճակը, տնտեսական հիմքերը, արտադրահարաբերությունները հիմականում փոխվել են և ներկայումս այլ բնույթ ունեն:

Հարցը չկանոնակարգելու հետևանք է նաև այն, որ ագրարային ոլորտում ձևավորված գյուղատնտեսական գործունեության ծավալող տարբեր սուբյեկտներին բնութագրելու ժամանակ որոշ մասնագետներ, ղեկավար աշխատողներ՝ առանց խորանալու էության մեջ, բանավոր և գրավոր ձևով հաճախ գործածում և նույնականացնում են «գյուղական տնտեսություններ», «Ֆերմերային տնտեսություններ», «գյուղացիական տնտեսություններ» հասկացությունները՝ չունենալով անհրաժեշտ հիմնավորումներ:

Գյուղական բնակավայրերի բոլոր տնտեսություններն անվանել գյուղացիական կամ ֆեմերային՝ առանց հաշվի առնելու առանձնահատկությունները և նույն ձևակերպմամբ ներկայացնելը ընդունելի չէ, քանի որ բոլոր հատկանիշների համեմատության դեպքում դրանք այլ բովանդակություն են ստանում:

Մեր դիտարկումներով՝ դրա հիմնական պատճառն այն է, որ հաճախ նույնականացվում են «կարգավիճակ և անձ», «տնտեսություն և տնտեսվարող», «գյուղացիական և ֆերմերային», «մենեջեր և ֆերմեր» և այլ հասկացությունները, քանի որ դրանց մի մասը իրավական ձևակերպում չի ստացել:

Պետք է ելնել նրանից, որ չնայած հասկացությունների նմանություններին՝ առկա են էական տարբերություններ, որոնք պահանջում են սահմանումները ձևակերպել այնպես, որ դրանք արտահայտեն ներկայումս համաշխարհային պրակտիկայում արդեն ընդունված ֆերմեր և ֆերմերային տնտեսութուն հասկացությունների էությունը: Ընդ որում, սահմանելիս կիրառել համընդհանուր, ինչպես նաև մեր պայմանների համար ընդունելի առանձնահատուկ բնութագրիչները (չափորոշիչները), հաշվի առնելով բարեփոխումների հետևանքով գյուղատնտեսությունում ստեղծված իրողությունը:

Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը և վերը նշված հարցի վերաբերյալ մեկնաբանումները, առկա տեսակետները, իրավական հիմքերը, գյուղատնտեսության ոլորտում ձևավորված տնտեսավարման ձևերի բնույթը և կարգավիճակը՝ պարզվել է, որ բազմաթիվ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Անգիա և այլն) ընդունված են «ֆերմեր և ֆերմերային տնտեսություն» ձևակերպումները և տրված են դրանց մեկնաբանումները: Կան նաև երկրներ, որտեղ ընդունված իրավական փաստաթղթերում (ՌԴ, Բելառուս) ֆերմերային և գյուղացիական տնտեսությունները նույնականացված են, սակայն ամրագրված են համապատասխան օրենքներով:

ՀՀ-ում այդ նպատակով փորձեր են արվել, սակայն խնդիրն առ այսօր մնացել է չլուծված, չնայած դեֆակտո մեր երկրում առկա են նմանատիպ հազարավոր տնտեսություններ: Ըստ էության, դրանք ֆերմերային տնտեսություններ են և բավարար են հստակ ձևակերպելու և տայու հաճախակի քննարկվող հետևյալ հարցերի ամփոփ պատասխանները՝ ո՞վ է ֆերմերը և ո՞րն է ֆերմերային տնտեսությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած այս հարցերի վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ, այնուամենայնիվ, բոլորը հիմք են ընդունում մի շարք ընդհանուր բնութագրիչներ:

Ֆերմերը դիտարկվում է որպես անձ՝ հիմք ընդունելով հիմնական գործունեության տեսակը (գյուղատնտեսությունը), բնագավառը (բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրություն), տնտեսական հիմքը (հողատարածք, շինություններ, հիմնական միջոցներ՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար), տեխնոլոգիական գործընթացներին տիրապետելը և մասնակցությունը դրանց կատարմանը:

Այսպիսի գործունեություն ծավալելու համար, ֆերմերը կարող է հանդես գալ՝ գյուղմթերք արտադրողի, վերամշակողի, իրացնողի, ղեկավարի դերում, սակայն անձի կարգավիճակով: Հաշվի առնելով նշված բնութագրիչները, «ֆերմեր» հասկացությունը առաջարկվում է սահմանել հետևյալ ձևով՝

Ֆերմերն այն անձն է, ով հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ, տիրապետում է գյուղատնտեսության տեխնոլոգիական գործընթացներին, անձնական աշխատանքով և ընտանիքի ուժերով, սեփական ու վարձակալած միջոցներով արտադրում, վերամշակում և իրացնում է բուսաբուծական և անասնաբուծական մթերքներ:

Երբ խոսքը վերաբերվում է ֆերմերային տնտեսության սահմանմանը, ապա այն այլ նշանակություն և բովանդակություն է ստանում, քանի որ այն դիտարկվում է որպես տնտեսվարման ձև, հիմքում դրվում են կոնկրետ նաև այլ բնութագրիչներ: Դրանց թվում՝ առաջին հերթին հաշվի են առնվում կարգավիճակի առկայությունը, հիմնական գործունեության ոլորտը, տնտեսավարման ձևը, նպատակներն ու խնդիրները, արտադրության ծավալի ու վերջնական արդյունքների կառուցվածքում գյուղատնտեսության գերակշռվածությունը: Հետևաբար, ֆերմերային տնտեսությունը կարելի սահմանել հետևյալ ձևով՝

Ֆերմերային տնտեսությունը տնտեսավարման ձև է՝ տարբեր կազմակերպա-իրավական կարգավիճակով, հիմնական գործունեության ոլորտը գյուղատնտեսությունն է, սեփական և վարձակալված միջոցներով արտադրում է բուսաբուծական և անասնաբուծական մթերքներ՝ վերամշակման և հիմնականում իրացման նպատակով:

Նկատի պետք է ունենալ, որ ֆերմերային տնտեսությունը կարգավիճակ չէ, այն գյուղատնտեսությունում տնտեսավարման ձև է, որը կարող է դրսևորվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ կազմակերպա-իրավական ձևով՝ առևտրային, ոչ առևտրային, ՍՊԸ-ների, ԲԲԸ-ների, ՓԲԸ-ների, կոոպերատիվների կարգավիճակով:

Այնքանով, որ վերջինների գործունեությունը հիմնականում ուղղված կլինի գյուղատնտեսությանը, նպատակահարմար է դասակարգել միևնույն խմբում և անվանել որպես գյուղատնտեսական տնտեսություններ:

Նշված հասկացությունների սահմանումը կարևոր է հատկապես կարգավիճակի հստակեցման, ճիշտ կողմնորոշման, հարաբերությունների կարգավորման, աջակցության հասցեականության, թողարկվող մասնագետներին բավարար հմտություններով ու կարողություններով օժտելու անհրաժեշտությունից ելնելով: Խնդիրը իրավական կարգավորման կարիք ունի, որին կարելի է լուծում տալ շահագրգիռ կողմերի հետ համակողմանի քննարկումների ընթացքում:

Հ. Ս. ՋԱՎԱԴՅԱՆ
տնտ . գիտ թեկնածու
Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ՍԵՄԻՆԱՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մի խումբ դասախոսների մասնակցությամբ հետաքրքիր և ուսանելի, բովանդակալից սեմինար-դասընթաց էր կազմակերպվել Տավուշի մարզպետարանում: Մասնակցում էին մարզպետարանի գյուղատնտեսության ոլորտի աշխատակիցներ, Տավուշի ԳԱՄԿ-ի մասնագետներ և խորհրդատուներ, մարզի ճանաչված ֆերմերներ և կոոպերատիվների անդամներ: Թեմաները բավականին պահանջված և ուսանելի էին, ընդգրկում էին գյուղատնտեսության բոլոր ոլորտները:

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Հրաչիկ Ջավադյանը ներկայացրեց գյուղատնտեսության առջև ծառացած լուրջ խնդիրները՝ նշելով, որ դրա կարգավորման հիմնական միջոցը՝ գիտություն-արտադրություն կապի սերտացումն է: Նա անդրադարձավ հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվներին, կազմակերպման խոչընդոտներին և հաղթահարման միջոցներին: Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ, դոցենտ Հայկ Ղազարյանը խոսեց ֆերմերային տնտեսությունների ձևավորման շուրջ՝ հիշեցնելով, որ այդ տնտեսությունները կանգնած են կոտրած տաշտակի առջև, անհրաժեշտ են արմատական փոփոխություններ: Դրան ուղղված՝ իր տեսակետները ներկայացրեց մարզի Խաչթառակ համայնքի ֆերմեր Հասմիկ Թիրաբյանը: Դոցենտ Զորիկ Փամբուխչյանը ներկայացրեց անասնապահության ոլորտում առկա նորագույն տեխնոլոգիաները: Բավականին հետաքրքիր էր նաև «Պտղաբուծության զարգացման հեռանկարները և առկա վիճակը» թեման, որը ներկայացրեց դոցենտ Արա Հովհաննիսյանը:

Քննարկման առանցքը կոոպերատիվների ստեղծման գաղափարն էր՝ այն հաստատ համոզմամբ, որ գյուղատնտեսության զարգացման հիմնական բանալին՝ դրանց ստեղծման, միավորման մեջ է, քանի որ ոլորտում զորեղ են բոլորը միասին: Դասընթացը նաև քննարկման վերածվեց, քանի որ բոլորին հետաքրքրող հարցերը բավականին շատ էին:

Երկուստեք միմյանցից ուսանելի շատ բան ստացան և ձևավորվեց առաջարկների մեծ փաթեթ՝ ելնելով ագրարային կրթության և գյուղատնտեսության զարգացման հեռանկարներից:

Տաթևիկ Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

ՈՒԺԵՂ ԿԻՆ՝ ՈՒԺԵՂ ԱՇԽԱՐՀ

ԱՇՈՏԱՎԱՆԻ ԿԱՆԱՅՔ ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Վիկտորյա»՝ այս հաղթական անունով կոչվեց Աշոտավանում ստեղծված ազնվամորու արտադրությամբ զբաղվող կանանց նախաձեռնող խումբը, դրանով իսկ կանխատեսելով հետագա հաջողությունները: Համախմբվելով նոր գաղափարի շուրջ՝ կանայք կարողացան կյանքի կոչել այն և իրենց գործունեությամբ շրջադարձորեն փոխել ոչ միայն Աշոտավանի, այլև հարակից համայնքների բնակիչների կենսակերպը;

Աշոտավանի կանանց մասին պատմեց Վորլդ Վիժն Հայաստանի Սյունիքի մարզի տնտեսական ծրագրերի համակարգող Իրենա Բալայանը: Նա տեղական արժեշղթաների զարգացման ծրագրի շրջանակներում պետք է ուսումնասիրեր Սիսիանի տարածքում առկա զարգացման հեռանկարներ ունեցող արժեշղթաներից մեկ-երկուսը: Բոլոր համայնքներով շրջագայելով՝ հասել է Աշոտավան: Համայնքապետարանում զրույցել է համայնքի բնակիչների հետ, հետաքրքրվել, թե առավելապես ինչով են զբաղվում և հեռանկարային ինչ արտադրություն կարելի է հիմնել:

Զրույցներից տեղեկացել է, որ գրեթե բոլորի տնամերձերում ազնվամորի կա, և շատերն իրենց ընտանիքի հոգսերը հոգում են ազնվամորու մշակությամբ: «Նրանց հարցաթերթիկներ տվեցի և խնդրեցի լրացնել ու ներկայացնել: Տասը կին հետաքրքրվել էր ծրագրով, լրացրել հարցաթերթիկները և ներկայացրել Վորլդ Վիժնի Սիսիանի տարածքային գրասենյակ»,- ասում է Իրենան:

Նախաձեռնող կանանց ոգևորությունից խանդավառված՝ Իրենան կրկին Աշոտավան է գնացել՝ մոտիկից ծանոթանալու ազնվամորու ցանքատարածքներին: «Այն շատ հեռու էր արտադրություն կոչվելուց: Յուրաքանչյուրն իր տան բակում մի քանի տնկի ուներ, որոնք անխնամ թփուտներ էին: Բայց այդ, կանանց ոգևորությունն այնպես համակեց ինձ, որ սկսեցի ուսումնասիրել ազնվամորու մշակությունը»,- ասում է Իրենան:

Երբ ստեղծվեց խումբը, սկսվեցին դասընթացները. շեշտը դրվեց կարողությունների զարգացման վրա: «Կանաչ արահետ» ՀԿ-ի տնօրեն Նունե Սարուխանյանին հրավիրեցին Աշոտավան, և խմբի անդամներին ուղղորդեցին ազնվամուրու ճիշտ՝ լարա-սյունային համակարգով մշակմանը, որը բարձրացնում է բերքատվությունը և ավելի արդյունավետ է դարձնում մշակումը: «Զգացի, որ գործընթացը շատ արագ մեծ հետաքրքրություն առաջացրեց կանանց շրջանում, սկզբում օգտագործում էին իրենց տներում եղած լարերը, սյուները: Շատ ոգևորիչ էր: Ինչը սովորում էին դասընթացների ժամանակ, կիրառում էին իրենց այգիներում: Բացի մասնագիտական կարողություններից, սովորում էին նաև մարկետինգ, խմբային կառավարում, ֆինանսների հմտություններ, ու խմբով այդ ճանապարհն անցնելով՝ նրանք ավելի մտերմացան, համախմբվեցին: Խմբում ընդգրկված կանանց աշխատանքը տեսնելով՝ հարեւանները նույնպես աշխատում էին իրենց այգիներում, զգում, որ համայնքում ինչ-որ մի լավ բան է կատարվում, մի լավ բան է փոխվում: Խմբի անդամները կամաց-կամաց անձից վերածվեցին ֆերմերի»,- պատմում է Իրենան:

«Վիկտորյա»-ի փորձն ու հաջողությունները շատերի համար են օրինակ դարձել.

Երբ այդ ահռելի աշխատանքն արդեն արված էր, խումբը մասնակցեց Ավստրիական զարգացման գործակալության դրամաշնորհային մրցույթին և շահեց 30 հազար եվրո արժողությամբ ծրագիր, ինչն էլ բերկում մտցրեց խմբի գործունեության մեջ: Դրամաշնորհը հնարավորություն է ընձեռել անցնել ազնվամորու՝ օրգանական մշակությանը: Խմբի անդամներից յուրքանչյուրը հնարավորություն է ստացել 1000 մ^2 տարածքում կաթիլային և լարա-սյունային ոռոգման համակարգով այգիներ հիմնել: Այս տարի մարտից արդեն սկսում են աշխատանքները, խումբը դրամաշնորհով ձեռք է բերել մինի տրակտոր, այն դառնում է համախմբված կոլեկտիվ, ունեն իրենց արտադրական միջոցները, ունեն բարելավված այգիներ, մյուս տարի գարնանը կունենան հիմնական այգիներ: Ամենաուրախացնողն այն է, որ «Վիկտորյա»-ի փորձն ու հաջողությունները շատերի համար են օրինակ դարձել, և հենց այդ խմբի օրինակով են նոր խմբեր ստեղծվում ոչ միայն Աշոտավանում, այլև հարակից՝ Թասիկ, Տոլորս, Բնունիս համայնքներում: Այժմ գործում է ևս 5 խումբ: Բոլոր խմբերում ընդգրկված է 45 կին: «Մեր նպատակն այն է, որ ոչ թե Աշոտավանը դարձնենք ազնվամորու համայնք, այլ՝ տարածաշրջանը: Եվ դրա հավանականությունը շատ մեծ է: Դրան նպաստեց նաև նախորդ տարի անցկացված ազնվամորու փառատոնը, որի նպատակն էր՝ ամբողջ տարածաշրջանի ինտեգրումը»:

Ըստ Իրենա Բալայանի՝ իրացման հարցն էլ է աստիճանաբար լուծվում. արտադրանքի հիմնական շուկան Արցախն է, գնորդներն արտադրողից են գնում ազնվամորին, իսկ արտադրողը շուկա գտնելու ու արտադրանքն իրացնելու կարևորագույն հոգսից ազատված է: Սեզոնին արտարդրվում է շուրջ մեկ տոննա ազնվամորի: Նոր տեխնոլոգիաների շնորհիվ բարձրացել է բերքատվությունը:

Ծրագիրը համայնքում բազմաթիվ խնդիրներ է լուծել, որոնք մինչ այդ անհավանական էին թվում: Կարևորում է զբաղվածության խնդիրը, ընտանիքի՝ եկամտի բարձրացման խնդիրը, չնայած հայ ընտանիքում կինը միշտ իր հարգն ու պատիվն ունի, բայց այդ դերը նույնպես բարձրացել է, ի վերջո, խմբի անդամներից բացի՝ նաև մյուսները սովորեցին արտադրանքը բիզնես դարձնել:

«Նոր գաղափարներ, նոր մտածողություն, բիզնես մտածողություն և նոր ապրելաձև».

Մեր զրույցին միացավ խմբի հիմնադիր անդամներից մեկը՝ Անահիտ Սերոբյանը: «Ապրելով գյուղում՝ նյութական ոչ մի դժվարություն չեմ ունեցել, ամուսինս աշխատում է, աշխատել-ստեղծել ենք, մեր ընտանիքը պահել: Բայց ես համարյա խեղդվում էի, ծանր հոգեվիճակ էր, անորոշություն էր: Ամեն ինչ կարող էի, քաղաքում մեծացած աղջիկ էի, կթություն ունեի, ձեռքի շնորհք, գործել, ասեղնագործել, ազգային ասեղնագործություն, ու այդ ամենը կարող էի օգտագործել, իրացնել, բայց դաշտը չկար, ունեի բոլոր տվյալները, բայց ճանապարհը չգիտեի, մոլորված էին նաև ինձ նման շատերը: Ու ահա գալիս է Իրենը՝ փրկության պես բերում է նոր գաղափարներ, նոր մտքեր, նոր բիզնես մտածողություն, նոր ապրելաձև, որ գյուղաբնակ կինն էլ կարող է բիզնեսով զբաղվել»:

Հարցին՝ ինչին ձգտեցին և հասան, Անահիտ Սերոբյանն ասում է՝ «Մեր խմբի կարգախոսն է՝ ուժեղ կին, ուժեղ աշխարհ, և դա պատահական չէ: Մենք ոչ թե ուժեղ էինք, այլ ցանկացանք ուժեղ լինել, մենք դրա կարիքը ունեինք: Ի վերջո, հասանք այդ գիտակցությանը, փոխվեցինք, կրթվեցինք, ինքս գյուղատնտես չեմ, և գյուղում ապրելու տարիներին էլ շատ չեմ շփվել հողի հետ, բայց հիմա ավելին գիտեմ, քան՝ գյուղատնտեսական կրթություն ունեցողները: Իմ իմացածը փոխանցում եմ իմ շրջապատին: Ինձ համար այդ աշխատանքը խթանում է ապրել և աշխատել հանուն ընտանիքի, հանուն երեխաների, հանուն հայրենիքի»: Ապա ավելացնում է, որ որդիները սովորում են Երևանում, և առայժմ մտադրություն չունեն ուսումն ավարտելուց հետո գյուղ վերադառնալ: «Բայց կանեմ ամեն ինչ, որ նրանք շահագրգռված լինեն վերադառնալ ծննդավայր՝ շարունակելու այն գեղեցիկ գործը, ընդլայնելու այն բիզնեսը, որ ինքս եմ ստեղծել սիրով, նպատակներով ու լուրջ հեռանկարներով»:

Խմբերում ընդգրկված են 45-60 տարեկան կանայք, սակայն հիմնական նպատակներից է երիտասարդների ինտեգրումը: Թե արդյոք տղամարդիկ խանդում են, թե ոչ, Իրենան պատմում է, որ սկզբում նրանց համար էլ էր անսովոր, գուցե և անընդունելի, բայց երբ տեսան, համոզվեցին, որ իրենց կանայք էլ են կարողանում հոգալ ընտանիքի խնդիրները, հիմա նույնիսկ իրենք են օգնում, աջակցում: Կանանց ինքնավստահությունն է բարձրացել, իսկ տղամարդիկ սկսել են այդ ամենին լուրջ վերաբերվել:

Իսկ թե ինչ հեռանկարներ ունի ծրագիրը, Իրենան պատասխանում է. «Մեր ծրագիրը հարատև չէ, իսկ մեր նպատակն է, որ Վորլդ Վիժնի տարածաշրջանում գործունեություն չիրականացնելու դեպքում, Աշոտավանի «Վիկտորյա» խմբի անդամները դառնան դեպի տեղական շուկա տանող կապը ոչ միայն համայնքում, այլև՝ տարածաշրջանում, և մեզանից հետո կարողանան իրենք կոորդինացնել համայնքներին, խմբերին, արտադրողներին, շուկայի դերակատարների, մատակարարների, գնորդների հետ կարողանան անմիջական կապ հաստատել: Հետագայում կոոպերատիվ կդառնան, ասոցիացիա, թե հիմնադրամ, ենթադրում ենք, որ ոչ ֆորմալ համակարգից կդառնան ֆորմալ համակարգ և կկարողանան ամբողջ տարածաշրջանի արտադրությունը համակարգել»:

Տարիներ առաջ արտադրվում էր այնքան, որքան պետք էր ընտանիքի կարիքների համար, իսկ գյուղմթերքի մասին երբեք չեն մտածել որպես լուրջ բիզնեսի: Հիմա այդ մտածելակերպը փոխվել է, կարծրատիպն աստիճանաբար կոտրվել: Երբ մարդիկ սկսում են գումար աշխատել, հավատում են իրենք իրենց ու սկսում են մշակության տարածքներն ընդլայնել, դրան վերաբերվել որպես բիզնեսի: Հիմա ցանկանում են նորարարական փորձ անել, քանի որ Աշոտավանի ազնվամորին տարեկան 2 անգամ է բերք տալիս, բայց ցրտերի պատճառով չի հասցնում աշնան վերջին հասունանալ, դրամաշնորհի շնորհիվ նպատակ ունեն թունելային տնտեսության միջոցով, նոր փորձարկում անել: Հնարավոր է երկարացնել ազնվամորու կյանքը Սյունիքում, և այն մրցակցային առավելություն կունենա ամբողջ Հայաստանում:

Ի դեպ, Աշոտավանի կանայք ազնվամորու նոր տեսակ են ցանկանում ստեղծել և ի պատիվ ծրագրի համակարգող Իրենա Բալայանի, կոչել նրա անունով՝ «Իրենա»...

Արևհատ ԱՄԻՐՅԱՆ

ԱԳՐՈ Լրատու
Փետրվար 25 - մարտ 7, 2017 թ.
թիվ 4 (2125)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Այգեթաղ կատարող խաղողագործական շրջաններում խնամքի աշխատանքները սկսվում են այգեբացից:

Խաղողի այգիներում գարնանային մշակության հիմնական աշխատանքներն են՝ այգեբացը, շպալերայի վերանորոգումը, բաց տեղերի լրացումը, վազերի էտն ու ձևավորումը, այգու միջշարքերից արքադի հեռացումը, չոր կապը, հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը, պայքարը հիվանդությունների և վնասատուների դեմ, առաջին շվատումը, առաջին սնուցումը, առաջին կանաչ կապը և այլն:

Այգեթաղ կատարող խաղողագործական շրջաններում խնամքի աշխատանքները սկսվում են այգեբացից: Այգեբաց կատարելիս, անհրաժեշտ է վազի վրայից հողը զգուշությամբ հեռացնել այնպես, որ վազերի օրգանների հետ շփվող գործիքները չվնասեն թևերին, մատերին և աչքերին: Դրանից հետո, մակերեսային արմատները հեռացնելու համար, թափված հողը հավասարաչափ փռում են միջշարքային տարածություններում և վազերի բունը բացում 10-15 սմ խորությամբ:

Ուսումնասիրությունները հավաստում են, որ Արարատյան հարթավայրի այգիները կարելի է բացել մարտի առաջին տասնօրյակից, իսկ նախալեռնային գոտում՝ երկրորդ կամ երրորդ տասնօրյակից: Այգեբացն անհրաժեշտ է սկսել նախ՝ հարավային լանջերում, իսկ այնուհետև՝ հարթավայրերում և ցածրադիր մասերում հիմնադրված այգիներից: Խորհուրդ է տրվում այգեբացի և շպալերայի վերանորոգման աշխատանքներն ավարտել սեղմ ժամկետներում, որպեսզի վազերի էտն ու չոր կապն իրականացվեն մինչև աչքերի ուռչելը:

Վազերի էտն այգու մշակության շատ կարևոր և բարդ ագրոտեխնիկական միջոցառումներից է, որի հիմնական նպատակն է՝ կանոնավորել վազի տվյալ և հետագա տարիների բնականոն աճեցողությունը, պտղաբերությունը և բերքի որակը: Էտի ժամանակ կազմվում են որոշակի քանակությամբ բերքի օղակներ: Բերքի օղակը կազմված է լինում մեկ փոխարինողից և մեկ կամ մի քանի բերքատու մատերից: Սովորաբար, բերքի օղակը կազմվում է նախորդ տարվա փոխարինողի վրա: Վազերն էտելիս, պետք է հեռացնել խիստ ձգված, վնասված, թուլացած թևերը, ենթաթևերը: Դրանց փոխարեն, բնի մոտ գտնվող մատերից կամ հոռամատերից կազմավորվում են շարքից դուրս եկող թևերին և այլ մասերին փոխարինողներ, իսկ անդալիսի միջոցով վերացվում է այգու նոսրությունը:

Էտը հաջող կատարելու, էտված վազերից բարձր բերք ստանալու համար կարևոր նշանակություն ունի կատարման ժամանակը, որը հիմնականում կախված է տվյալ շրջանի հողակլիմայական պայմաններից: Այգեթաղ չկատարող խաղողագործական շրջաններում, որտեղ ձմեռը մեղմ է, վազերը կարելի է էտել աշնանը՝ տերևաթափից 15-20 օր անց և, երբեմն էլ՝ ձմռանը: Ձմռան ընթացքում վազերը պետք է էտել, երբ ջերմաստիճանը 0 ^{0} C-ից բարձր է: Ձմռանը միայա մատերը մեկից երկու աչքով ավելի երկար պետք է էտել:

Վազի բեռնվածությունը էտի ժամանակ, դրա վրա թողնված աչքերի, իսկ շվատումից հետո՝ շվերի և ծաղկաբույլերի քանակն է: Վազի բեռնվածության չափը կախված է հողակլիմայական պայմաններից, մշակվող սորտերի կենսաբանական առանձնահատկություններից, կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումների բնույթից, պլանավորվող բերքից, վազերի կոնկրետ վիճակից: Արարատյան հարթավայրի և նրա նախալեռնային շրջանների խաղողի այգիներում մեկ հեկտարի բեռնվածությունը պետք է կազմի 150-250 հազար, իսկ Հյուսիսարևելյան գոտում՝ 80-160 հազար աչք:

Արարատյան հարթավայրի և նրա նախալեռնային գոտու շրջաններում, 2,5 x 1,5 մ խտությամբ տնկված շպալերային այգիներում՝ Մսխալի, Արարատի, Շահումյանի, Երևանի դեղին և նման սորտերի վազերն էտելիս, թողնել 80-120, Ոսկեհատ, Գառան Դմակ, Ճիլար, Անահիտ, Ռքաճիթելի, Արենի և նման սորտերի վրա՝ 60-100, Կախեթ, Նազելի, Հաղթանակ, Կարմրահյութ և նման սորտերի վրա՝ 40-60 աչք: Հյուսիս-արևելյան շրջաններում՝ 2.0 x 1.25 մ խտությամբ տնկված այգիների յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել հետևյալ բեռնվածությունը՝ Ռքաճիթելի, Կաբեռնե, Սափերավի, Ջրջրուկ, Կարմրահյութ սորտերինը՝ 40-50 աչք, Լալվարի, Բանանց, Բոլղար, Կարդինալ սորտերի վազերի վրա՝ 55-65 աչք, իսկ Ալիգոտե, Պինո սև և նման թույլ աճեցողությամբ մյուս սորտերի վրա՝ 20-30 աչք:

Մեղրիի շրջանի խիտ տնկված այգիներում (1,5 x 1,0 մ), Արևիկ և Ալդարա սորտերի յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել 3-4 մատ՝ էտելով 8-10 աչք երկարությամբ, այն հաշվով, որ բեռնվածությունը կազմի 30-40 աչք: Էտի երկարությունը վազերի աճի և բերքատվության կարգավորման հիմնական ագրոմիջոցառումներից է: Կիրառվում են էտի երկարության հետևյալ ձևերը՝ կարճ էտ, երբ մատի վրա թողնում են 15 աչք և ավելի, միջակ էտ՝ 7-10 աչք, երկար էտ՝ 2 և ավելի աչք:

Գոյություն ունի նաև խառը էտ, երբ վազի վրա թողնվող մատերի մի մասն էտվում է կարճ, մյուս մասը՝ միջակ, մնացածը՝ երկար: Համեմատաբար լայն կիրառում ունի խառը էտը: Կարճ էտ կիրառվում է գլխավորապես ֆիլոքսերադիմացկուն մայրակների վազերի վրա: Բոլոր տիպի ձևավորումների ժամանակ փոխարինող մատերը ևս կարճ են էտվում (2-3 աչք): Կարճ, միջակ և խառը էտը կիրառվում է թմբային այգիներում: Այդ դեպքում վազի բնի վրա, տարբեր ուղղությամբ դասավորված թևերի կամ ենթաթևերի վրա պետք է թողնել 2-4 մատ՝ յուրաքանչյուրն էտելով 4-7 աչքով: Նազելին, Կախեթը և նմանատիպ աճեցողություն ունեցող սորտերը, անհրաժեշտ է էտել 4-5 աչքով, Ոսկեհատը՝ 5-6, իսկ Արարատի, Մսխալի, Կարմիր Կախանի, Երևանի դեղին, Վարդագույն Երևանի և այս կարգի մյուս սորտերը՝ 5-7 աչքով:

Բոլոր դեպքերում՝ ծայրամասում գտնվող կամ ուժեղ մատը պետք է էտել 1-2 աչքով ավելի երկար, քան՝ ներքևի մասում գտնվող կամ թույլ մատը: Շպալերայի վրա բարձրացված այգիներում էտը պետք է կատարել համեմատաբար երկար՝ բերքատու մատի և փոխարինողի սկզբունքով: Ուժեղ աճեցողություն ունեցող սորտերի (Արարատի, Երևանի դեղին, Թավրիզենի, Մսխալի և այլն) բերքատու մատերը պետք է էտել 10-12 աչքով, իսկ թույլ աճեցողություն ունեցող սորտերինը (Նազելի, Կախեթ, Ալիգոտե)՝ 6-8 աչքով: Լավ զարգացած վազերի բարձր բեռնվածությունն ապահովելու համար, յուրաքանչյուր բերքի օղակի վրա, մեկի փոխարեն, կարելի է թողնել երկու, իսկ առանձին դեպքերում նաև՝ երեք բերքատու մատ և մեկ փոխարինող: Էտը և արքադի տեղափոխումն ավարտելուց հետո, պետք է սկսել չոր կապը: Վազի թևերը, ենթաթևերը և բերքատու մատերը կապել առաջին և երկրորդ հարկ լարերից:

Անկախ ձևավորման համակարգից, շպալերային այգիներում վազերի բերքատու մատերը լարերին կապել աղեղնաձև, երբեմն՝ հորիզոնական դիրքով: Չոր կապի լավագույն ժամկետը համարվում է հյութաշարժության սկզբից մինչև աչքերի ուռչելը: Չոր կապի ժամանակ թևերը, ենթաթևերը և բերքատու մատերն այնպես պետք է դասավորել, որ շպալերայի հարթության վրա հավասարաչափ տեղավորվեն և խտացումներ չլինեն: Կապն ուժեղ չձգել, քանի որ աճեցողության ընթացքում բազմամյա ճյուղավորումներն ու միամյա մատերը հաստանում են: Այդ պատճառով՝ կապը հարկավոր է կատարել միայն ութաձև և փոքր-ինչ ազատ: Թմբային այգիներում չոր և կանաչ կապ չեն կատարում, այլ վազերը նեցուկավորում են: Չոր կապից հետո այգիների միջշարքային տարածությունները պետք է վարել 20-25 սմ, իսկ միջվազայինը փորել 18-20 սմ խորությամբ:

Հանքային և օրգանական պարարտանյութերը հող են մտցվում 2-3 ակոսներով՝ 25-30 սմ խորությամբ: Ամեն տարի, հեկտարի հաշվով, պետք է տալ 100-120 կգ ազոտ, 110-120 կգ ֆոսֆոր և 80-100 կգ կալիում (ազդող նյութի հաշվով): Օրգանական պարարտանյութերով պարարտացնելիս, հեկտարին պետք է տալ 30-40 տ կիսափտած գոմաղբ:

Թմբային այգիներում, որտեղ հողի մշակությունը կատարվում է ձեռքով, այգեփորը պետք է կատարել 25-27 սմ խորությամբ: Թմբային այգիները պարարտացնելիս, անհրաժեշտ է գարնանը, վազից 50-60 սմ հեռավորության վրա, բացել 30-35 սմ խորությամբ 4-5 փոս, դրանց մեջ լցնել պարարտանյութերի խառնուրդը և հողով ծածկել: Հողի մշակումից և պարարտացումից հետո այգին խնամքով ջրել և ավարտել մինչև աչքերի ուռչելը: Մայիս ամսին, ծաղկումից 15-20 օր առաջ, տրվում է առաջին սնուցումը, ազոտ՝ 30-35 կգ, ֆոսֆոր՝ 20-25 կգ, կալիում՝ 15-20 կգ (ազդող նյութի հաշվով):

Ծաղկումից առաջ, երբ շվերն ունենում են 10-12 սմ երկարություն և դրանց վրա նկատելի են ծաղկափթթություններ, պետք է կատարել առաջին շվատումը: Շպալերային այգիներում, անկախ վազին տրված ձևավորման համակարգից, շվերը, աճմանը զուգընթաց, պետք է կապել լարերից: Առաջին կապը կատարում են ծաղկումից առաջ, երբ շվերն անցնում են երկրորդ հարկ լարից: Կանաչ շվերը պետք է կապել ութաձև, առանձին-առանձին, ուղղահայաց դիրքով՝ հավասարաչափ դասավորելով շպալերայի հարթության վրա:

Գ. Մելյան
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,
ՀԱԱՀ, «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԲՈԼՈՐՍ ՊԻՏԻ ԹԵՔՎԵՆՔ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզում, գյուղատնտեսության ոլորտում ճանաչված անհատականություն է Սամվել Գասպարյանը, ում համար այդ ճյուղը համարվում է գերակա: Ինչպես ինքն է կարծում՝ բոլորս պիտի թեքվենք դեպի գյուղատնտեսություն...

Դա է վկայում վերջերս նրա մասնակցությունը Ավստրիայի զարգացման գործակալության և Եվրամիության օժանդակությամբ իրականացվող օրգանական գյուղատնտեսության նախաձեռնություն ծրագրին:

Արդեն 3.5 հա վրա Սամվել Գասպարյանը սկսել էր աշխատանքները՝ մոշենու և մորենու այգի հիմնելու նպատակով,երբ Տավուշի ԳԱՄԿ-ի միջոցով տեղեկացավ, որ դրամաշնորհային ծրագիր է իրականացվելու օրգանիկ գյուղատնտեսության ուղղությամբ: Ներկայացված ծրագիրը ևս հավանության արժանացավ: Արդեն կատարված են հողային աշխատանքները, տնկիները բերված են, ինքնահոս ջրի խնդիրը լուծված է: Նրա կարծիքով՝ ծրագիրը բավականին արդյունավետ կլինի, պայմանները դա են վկայում: Այդ այգու հարևանությամբ ֆերմերը նաև 1.5 հա խնձորենու երիտասարդ այգի է հիմնում:

Գյուղատնտեսությունը նրա համար ցանկալի ոլորտ է. 35 հա հողատարածք է մշակում, որից՝ 7 հա այգի՝ դեղձենու և ժորենու (կարալյոկ): Սամվել Գասպարյանը օրգանիկ մթերքի արտադրության կողմնակից է: Նա պարբերաբար հանդիպումներ է ունենում Տավուշի ԳԱՄԿ-ի մասնագետների և տնօրեն Վահան Կարապետյանի հետ, ստանում իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը: Ֆերմերը Նոյեմբերյանի տարածաշրջանում նոր աշխատատեղերի ստեղծման համար քայլեր է կատարել, ըստ նրա՝ արդյունավետ գործունեության համար լուրջ ներդրումներ են անհրաժեշտ: Անում է ամեն ինչ, որ գյուղատնտեսությունը տարածաշրջանում վերելք ապրի:

Տ. Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԲԱՄԻԱ

Բամիան կամ Կուտատուկը (Hibiscus esculentus), փիփերթազգիների (մոլոշազգիներ, տուղտազգիներ) ընտանիքի միամյա բույս է: ՀՀ-ում հիմնականում մշակվում է Արարատյան դաշտում: Նախացանքային մշակության միջոցառումները նույնն են, ինչ մյուս բանջարաբույսերինը:

Ցողունը ճյուղավորվող է, բարձրությունը՝ 30-200 սմ: Տերևները երկարակոթուն են, խոշոր, թաթաձև-բլթակավոր կամ թաթաձև-բաժանված, թավոտ: Ծաղիկները երկսեռ են, խոշոր: Ծաղկում է ամռանը: Պտուղը՝ երկարավուն, կարճ մազմզուկներով ծածկված, բազմասերմ տուփիկ է: Սերմերը կանաչ են ու կլորավուն: Չհասունացած տուփիկներն օգտագործվում են որպես սնունդ (թարմ, չորացրած, թթու դրած), սերմերը փոխարինում են սուրճին: Մշակվում է բամիայի տեղական սորտ-պոպուլացիան: Ստացվել է Սոնա սորտը: Բամիան շատ լավ բնական միջոց է բազմաթիվ հիվանդությունների բուժման համար:

Կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ բամիան շատ օգտակար է շաքարախտով հիվանդ մարդկանց համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ այս բանջարեղենի պարբերաբար օգտագործումը փոխում է այն գեների ակտիվությունը, որոնք պատասխանատու են այդ հիվանդության համար:

Գիտնականները հայտնում են, որ հետագայում դրա միջոցով կարող է ստեղծվել մի դեղ, որը կօգտագործվի շաքարախտի բուժման համար: Սակայն քանի դեռ բամիայից պատրաստված դեղահաբեր չկան, կարող եք օգտագործել բամիայից պատրաստված ըմպելիք՝ շաքարի քանակն արյան մեջ նվազեցնելու համար: Պատրաստման համար անհրաժեշտ է բաժակի մեջ դնել մեկ հատ բամիա, վրան լցնել ջուր և թողնել մեկ գիշեր, առավոտյան խմել: Այս ըմպելիքը կարող է նվազեցնել նաև քաղցկեղի առաջացման հավանականությունը, շատ լավ բուժում է կոկորդի ցավը, ստամոքսային հիվանդությունները և խոցը: Բամիան շատ լավ հակաբորբոքային միջոց է: Բամիան զարմանալի բանջարեղեն է, որով կարելի է պատրաստել տարբեր ապուրներ և աղցաններ: Բամիան կալցիումի հարուստ աղբյուր է: Այն պարունակում է երկաթ, մագնեզիում, ֆոսֆոր, ցինկ, A, B_1, B_2, B_3, C, E, K վիտամիններ: Ներկայացնում ենք 5 ոչ այնքան հայտնի պատճառ, թե ինչու պետք է սննդի մեջ բամիա կիրառել:

1.Բամիան խթանում է առողջ հղիությունը: Բամիան հարուստ է ֆոլաթթվով, որը շատ կարևոր է նոր բջիջների արտադրման ու պահպանման համար: Ֆոլաթթուն կանխում է ծննդաբերական թերությունները և օգնում է երեխայի առողջ աճին: Վիտամին C-ն ևս շատ կարևոր է պտղի զարգացման համար:

2. Կանխում է շաքարախտը. այն կարող է կայունացնել շաքարի մակարդակը արյան մեջ և կանխել շաքարախտի առաջացումը:

3. Օգնում է շնչառական խնդիրների ժամանակ. բամիայի հակաօքսիդանտ ու հակաբորբոքային հատկությունները, ինչպես նաև վիտամին C-ն, կրճատում են ասթմայի ախտանշանների առաջացման և սրտի կաթվածի հավանականությունը:

4. Կանխում է սակավարյունությունը, քանի որ բամիայի մեջ առկա երկաթը, ֆոլաթթուն, վիտամին K-ն օգնում են հեմոգլոբինի ձևավորմանը, արյան կարմիր բջիջների արտադրությանը՝ պաշտպանելով սակավարյունությունից:

5. Իջեցնում է խոլեստերինը:

Բամիան նպաստում է լավ մարսողությանը, բարձրացնում դրական խոլեստերինի մակարդակը՝ շնորհիվ իր բարձր մանրաթելային պարունակության, միաժամանակ նվազեցնելով բացասական խոլեստերինի քանակը արյան մեջ:

Լիլիթ Գասպարյան

ԴԱՆԴՈՒՌ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ

Դանդուռ բանջարանոցայինը միամյա բույս է, պատկանում է դանդուռազգիների ընտանիքին (Portulacaceae), որն ընդգրկում է ավելի քան 100 տեսակ: Հունաստանում, պեղումների ժամանակ հայտնաբերվել են բույսի սերմերը: Կան տվյալներ, որ բույսը, որպես սննդամթերք, առնվազը 3000 տարի առաջ օգտագործվել է՝ Արևմտյան Հնդկաստանում:

Եգիպտոսում ու Մերձավոր Արևելքում մինչ մեր օրերը, դանդուռը հարգի սննդամթերք է. այն ավելացնում են ձվածեղի մեջ, իսկ թարմ ու չորացրած տերևներով ու ցողունով համեմված աղցանները ստացել են «ֆատուշ» անվանումը: Հնէաբան Շելլը հայտնաբերել է դանդուռի բուժիչ հատկություններն ու դեղերի պատրաստման եղանակները նկարագրող հին ասորական ձեռագրեր: Հիպոկրատը խորհուրդ է տվել կիրառել դանդուռը գլխացավի, թութքի, աչքի, ստամոքսի հիվանդությունների, արյունոտ խորխի ու որդերի դեմ: Սակայն անտիկ ժամանակներում հույներն, ի տարբերություն հռոմեացիների, չեն օգտագործել դանդուռը սննդի մեջ:

Ավիցենան (980-1037) գրել է. «Դանդուռն ունի կապող, արյունարգել հատկություն: Օգտակար է ստամոքսի ու լյարդի բորբոքումների ժամանակ, նվազեցնում է երիկամների, միզապարկի ցավերը, կիրառվում է միզապարկի խոցի դեպքում»:

Բժիշկ Օդոն (11-րդ դար) գրել է. «Շոգ եղանակին, տենդի ու արյունահոսության դեպքում, օգտակար է ծամել տերևն ու խմել հյութը, իսկ աչքերի այտուցվածության դեպքում՝ տրորել, դնել կոպերին»: Անգլիայում դանդուռը հարգի է եղել Ելիզավետա Ա թագուհու (1558-1603) օրոք՝ պատրաստել են թթու և մարինադ: Ավանդույթը շարունակվել է Կարլ Բ արքայի (1660-1685) օրոք: Նրա խոհարարը հաճախ է պատրաստել հետևյալ աղցանը. 150 գ թարմ տերևը 2-3 րոպե եփել ու խառնել 10 մլ խաղողի քացախի, 1 ատամիկ սխտորի ու մի փոքր պղպեղի հետ: Այդ աղցանով համեմել են մսից ու ձվից պատրաստված ուտեստները: Բույսի հանդեպ՝ որպես դեղի, հետաքրքրությունն աճել է 1849 թվականից հետո, երբ ԱՄՆ-ի հանքերում աշխատող 10.000 բանվորների շրջանում տարածվել է լնդախտ հիվանդությունը. Փրկվել են միայն նրանք, ովքեր դանդուռ են կերել, որն անվանել են «հանքափորի հազար» (նույնն է՝ մարող):

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԴԱՆԴՈՒՌԻ ՄԱՍԻՆ

Բույսի գիտական անվանումը բառացիորեն թարգմանվում է՝ «դռնակ»: Հայերենում ունի նաև փրփրեմ, խոճկորուկ, դանդռնիկ, նուկտավ, անդրաքնե և այլ անվանումներ: «Դան» արմատն ունի հատիկ իմաստը, իսկ պտղի վրա կա դռան փեղկը հիշեցնող լայնակի ճեղք: Փրփրեմ անվանումը հավանաբար կապված է բույսի մեջ պարունակվող փրփրանյութերի հետ: Գիտական գրականությունում երբեմն հանդիպում է նաև «Dandur» անվանումը:

Քչերին է հայտնի, որ Բաղդադի խալիֆայի հիմնադրած հիվանդանոցում ավելի քան 2 դար ղեկավար դիրքեր են զբաղեցրել Բաղտիշու գերդաստանի հայ բժիշկները: Մ. Հերացին (մոտ 1120-1200) խորհուրդ է տվել տենդով հիվանդներին ուտել գինձ, կարոս, ռեհան, բամիա, դանդուռ, նուռ, խաղող, ունաբի (տես, Ջ. Սահակյան, «Ունաբի: Արեւելյան բժշկության գաղտնիքները», ՄՐ): Ա. Ամասիացին գրել է. «Եթե դանդուռի եփուկով լվանան մազերը, կվերանա թեփը: Սերմերի եփուկն օգնում է սրտխփոցների դեպքում: Թարմ հյութը որդաթափ հատկություն ունի և հագեցնում է ծարավը»: Հ.Ս. Հարությունյանն իր «Միջնադարյան հայկական բժշկարանների դեղաբույսեր» գրքում գրել է. «Դանդուռն օգտագործել են մարսողական ուղիների ուռուցքների, միզապարկի խոցերի, միզուղիների բորբոքումների, լյարդի, սրտի ու ստամոքսի բորբոքային հիվանդությունների, թոքաբորբերի, հազի, ականջի բորբոքային ուռուցքների բուժման համար»: Միջնադարի բժիշկների գործնական առաջարկներն առ այսօր կիրառվում են տարբեր ազգերի ավանդական բժշկությունում և ժամանակակից գիտության տեսանկյունից լիովին հիմնավորված են:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Հայփոստ»,
- «Հայմամուլ»,
- «Պրեսս-Սառուցյալ»

կազմակերպությունները

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 8
ստորագրված է տպագրության 06.03.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա